ՀՏԴ 929:78(479.25)Ալան Հովհաննես

Doi:10.54503/0135-0536-2024.1-284

ԼԻԼԻԹ ԵՐՆՋԱԿՅԱՆ. Ալան Հովհաննեսի երաժշտական աշխարհը. Արևելք-Արևմուտք խաչմերուկներ, “Cambridge Scholars Publishing”, *2023, 153 էջ*:*

LILIT YERNJAKYAN**.** The Musical World of Alan Hovhaness: East-West Crossroads, “Cambridge Scholars Publishing”, 2023, 153 p.

Բանալի բառեր՝ Ալան Հովհաննես, Վիլյամ Սարոյան, հայկական ինքնություն, ամերիկյան մշակույթ, Արևելք-Արևմուտք մշակութային երկխոսություն:

Մեծ Բրիտանիայի “Cambridge Scholars Publishing” *մեծահամբավ հրատարակչությունը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, լույս է ընծայել Արվեստի ինստիտուտի Երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Երնջակյանի անգլերեն աշխատությունը՝ նվիրված XX դարի ամերիկահայ անվանի կոմպոզիտոր Ալան Հովհաննեսի երաժշտական ժառանգության ուսումնասիրությանը՝ Արևելք-Արևմուտք մշակութային փոխառնչությունների համատեքստում:*



Այս աշխատությունն իր նախապատմությունն ունի. այն նվիրված է Լիլիթ Երնջակյանի ուսուցչի՝ անվանի երաժշտագետ-կոմիտասագետ Ռոբերտ Աթայանի հիշատակին, ում ղեկավարությամբ նա ձեռնամուխ է եղել Հովհաննեսի երաժշտության ուսումնասիրությանը՝ հետագայում շարունակելով իր գիտական պրպտումները Մերձավոր ու Միջին Արևելքի մշակութային ավանդույթների և հայ երաժշտարվեստի արևելյան առանցքը ներկայացնող երևույթների ու հարցերի ուղղությամբ: Ազգային մշակութային ինքնության և համեմատական երաժշտագիտության դիրքերից են իրականացված նաև Երնջակյանի հայ-իրանական և հայ-թուրքական երաժշտական աղերսների հիմքերն ու բնույթը պարզաբանող արժեքավոր աշխատությունները՝ քրիստոնյա և մահմեդական Արևելքներին բնորոշ իրողությունների ընդգրկումով: Ալան Հովհաննեսի երաժշտական ժառանգության «արևելյան» ու «հայկական» հատվածների քննությունը Երնջակյանի հետազոտական նախասիրությունների առաջին հայտերից էր:

Տարիներ անց հնարավորություն ունենալով աշխատել ամերիկյան համա-

---

** Ներկայացվել է 02. II. 2024 թ., ընդունվել է տպագրության 22. III. 2024 թ.:*

լսարանների գրադարաններում, ծանոթանալով Ալան Հովհաննեսի ստեղծագործությանն առնչվող տարաբնույթ հրապարակումներին, պարբերական մամուլի նյութերին և մեծաքանակ ստեղծագործություններին՝ Երնջակյանը բազմաթիվ հոդվածներ է գրել՝ լուսաբանելով բեղմնավոր կոմպոզիտորի ստեղծագործություններում արևելյան՝ հնդկական, հայկական, կորեական, ճապոնական երաժշտության ավանդական ժանրերի մարմնավորման սկզբունքները: 2015 թ. լույս է տեսել Երնջակյանի հեղինակած մենագրական աշխատանքը՝ նվիրված Ալան Հովհաննեսին («Ալան Հովհաննեսի երաժշտությունը Արևելք-Արևմուտք մշակութային խաչուղիներում»), որում երաժշտագետն առաջադրում է Հովհաննեսի «բազմաղեմ Արևելքի» իր մեկնաբանության ելակետային կետերը՝ խարսխված կոմպոզիտորի հայկական ինքնության, նրա երաժշտագեղագիտական և փիլիսոփայական հայացքների, Հին ու Նոր Աշխարհների փոխհարաբերության պատկերացումների վրա: «Ազգային ինքնության և ազգային մշակույթի գիտությամբ է պայմանավորված հայազգի ամերիկացու շրջադարձը դեպի Արևելք, ինքնություն, որի դրսևորումներն առկա են նրա ամենատարբեր արևելյան թեմաներով ստեղծված երկերում» (էջ 10), – գրում է Լ. Երնջակյանը: «Հայկականությունը ոչ միայն տարեթվերով սահմանափակված փուլ է Ալան Հովհաննեսի ժառանգության մեջ, – շարունակում է հեղինակը, – այլ սեփական «Ես»-ի բացահայտում, ինքնաընկալման տարածք և ելակետ՝ համաարևելյան քաղաքակրթության տարբեր ոլորտներին հաղորդակցվելու համար» (էջ 10): Իր հիմնավորումներում Երնջակյանն ընդգծում է, որ «... խորհրդապաշտական-արարողական հիմնանյութ փնտրող կոմպոզիտորը կարևորելով զոհաբերության գաղափարը, ոչնչացրել է հարյուրավոր ստեղծագործություններ և իր հայկական ինքնության գիտակցված խորհուրդը սիմվոլիկ նվիրագործման ծեսով է նշանավորել» (էջ 120):

Եվ ահա Ալան Հովհաննեսի անընդգրկելի ստեղծագործական ժառանգության շարունակական հետազոտությունների ընթացքում Լիլիթ Երնջակյանը բացահայտել է XX դարի մեկ այլ արտառոց ամերիկահայի՝ նշանավոր գրող և բազմատաղանդ արվեստագետ Վիլյամ Սարոյանի հետ ունեցած նրա մտերմությունն ու նամակագրությունը:

Ալան Հովհաննեսի կենսագրության էջերում հանդիպած մի քանի նամակների հետքերով Երնջակյանը «հասել» է Կալիֆոռնիայի Ստանֆորդ համալսարանի գրադարանի հատուկ հավաքածուների բաժին, որտեղ պահվում է Սարոյանի արխիվը, և ձեռք բերել այդ մեծարժեք նամակագրությունն ու այլ՝ տեղեկատվական նյութեր: Դրանք առիթ են հանդիսացել հեղինակի այս նոր՝ անգլերեն մենագրության ստեղծման համար, որն, ըստ ամենայնի, առաջին հայ երաժշտագետի աշխատանքն է, որ հրատարակվել է “Cambridge Scholars Publishing”*-ի կողմից:*

Արվեստագիտական լայն հանրությանը հասցեագրված գրքի առաջին երկու գլուխներում ներկայացված են Ալան Հովհաննեսի ստեղծագործական կենսագրությունը, Արևելք-Արևմուտք մշակութային երկխոսության հետաքրքիր դրսևորումները տարբեր ժամանակափուլերում: Փաստերի և երաժշտական իրողությունների բնութագրական շարքով հեղինակը լուսաբանում է Արևելքին դիմելու ավանդույթի հիմքերն ու մշտական առկայությունն Արևմուտքի երաժշտարվեստի ձևավորման ընթացքում, արևելյան թեմաների և երաժշտական տարատեսակ երևույթների ներթափանցումներն ու դրանց ստեղծագործական մարմնավորումներն Արևմուտքի կոմպոզիտորական արվեստում. խնդիրներ, որոնք անմիջականորեն առնչվում են Ալան Հովհաննե-

սի երաժշտական մտածողությանը, երաժշտագեղագիտական պատկերացումներին և լեզվաոճական նախապատվություններին:

Գրքի հետաքրքիր մտահղացման երրորդ՝ «Ալան Հովհաննես և Վիլյամ Սարոյան նամակագրությունը» խորագրով գլխում՝ «Ազգային ինքնության դրսևորումները» ենթաբաժնում, Սարոյանի երաժշտական տաղանդի և օժտվածության, նրա ստեղծագործ երևակայության իրական բացահայտումներից է, որ միևնույն ժամանակ նոր երանգներ է հաղորդում կոմպոզիտորի «հայկականությանը»: Ինչպես վկայում են գրքում ներառված փաստերն ու տվյալները, Սարոյանը հնչեղ ձայն է ունեցել, հարմոնիկա և պիանոլա է նվագել, հին հայկական մեղեդիների համար նոր տեքստեր գրել և դրանք ներմուծել իր պիեսների բեմական ներկայացումների սցենարների մեջ:

Տասնամյակներ շարունակվող և մինչ օրս չհրատարակված Սարոյան-Հովհաննես նամակագրության ուսումնասիրությամբ, առանձին նամակներից քաղված մեջբերումներով՝ Երնջակյանը գիտական շրջանառության մեջ է դրել հետաքրքիր և արժեքավոր նյութեր, որոնք գրողի ու կոմպոզիտորի անկեղծ բարեկամության և նրանց հոգևոր-ստեղծագործական կապի վկայություններն են: Դրանք, ինչպես նշում է Երնջակյանը, պատկերացում են տալիս «երկու հայազգի ամերիկացիների նոստալգիկ զգացումների, Տան և Հայրենիքի ընկալումների և ամենակարևորը, հայ երգն ու երաժշտությունն աշխարհին ներկայացնող նրանց ինքնատիպ մտահղացումների և անսպառ ծրագրերի մասին» (էջ 39):

Արխիվային նյութերի և մատչելի երաժշտական ձայնագրությունների քննությամբ Երնջակյանն ուրվագծել է Սարոյանի և Հովհաննեսի համագործակցությամբ ստեղծված բազմաթիվ երգերի, մյուզիքլների, ռապսոդիաների, ֆիլմերի և երաժշտաբեմական ներկայացումների ընդգրկուն ու տպավորիչ պատկերը:

Կարևոր նկատառումներով և փաստերով է հեղինակը ներկայացնում XX դարակեսին ԱՄՆ-ում «մեծ փոթորիկ» առաջացրած «Արի իմ տուն» մյուզիքլը (1939), որ տարածվել և ամերիկյան բազմաթիվ աստղերի կատարողական երկացանկի անբաժանելի մասն է դարձել ու շարունակել հնչել նաև XXI դարի զանազան հեռուստատեսային շոուներում, կինոնկարներում և այլն: Նույնքան ուշագրավ է արևմտահայերի կենցաղը պատկերող «Գիրագի պիկնիկ» (1941) մյուզիքլի վերլուծականն իր դրամատիկ ենթատեքստի՝ «Նոր տան միջավայրում հայտնված արևմտահայերի երաժշտական կենցաղի և նախասիրությունների մեկնաբանությամբ»:

Աշխատության կառուցվածքում առանձնահատուկ դրամատուրգիական նշանակություն ունեցող այս բաժնին հաջորդում են Ալան Հովհաննեսի հայկական և արևելյան ստեղծագործություններին նվիրված չորրորդ ու հինգերորդ գլուխները, որտեղ հեղինակը հանգամանալից վերլուծության է ենթարկում և գիտական հիմնավորումներով առանձնացնում արևելյան թեմաներով գրված առավել նշանակալից երկերը, մեկնաբանում համապատասխան ազգային ավանդույթների կերպարային-մեղեդային արտահայտչականության, ձայնակարգային ու ելևէջային առանձնահատկությունների կիրառության սկզբունքները:

Հնդկական «Արջունա» սիմֆոնիայի, «Մադրասյան սոնատի», ճապոնական «Մամռոտ այգի», «Ֆանտազիա ըստ ճապոնական փորագրությունների» և բազմաթիվ այլ ստեղծագործությունների օրինակներով, երաժշտաբեմական գործերի՝ «Բորոտ արքան», «Վառվող տունը», «Ճանապարհորդները» օպերաների ոչ ավանդական ժանրային հատկանիշների քննարկումներով

Երնջակյանն արծարծում է մշակութային փոխներթափանցումների, երաժշտաոճական հակադիր և համադիր տարրերի, արևմտյան կոնստրուկտիվիզմի ու արևելյան լայնաշունչ հանկարծաբանության խնդիրները:

Հայկական թեմաներով գրված երկերին նվիրված բաժնում՝ «Արարատ» սիմֆոնիա, «Վանա լճի սոնատ», «Էջմիածին», «Լուսածագ» և բազմաթիվ այլ կամերային-գործիքային հայանուն գործերի երաժշտական բնութագրերով և լեզվաոճական հատկանիշների վերլուծությամբ, հեղինակը բացահայտում է Ալան Հովհաննեսի երաժշտական ըմբռնումների հիմքերը՝ ձևավորված Կոմիտասի հոգևոր ու ժողովրդական երգերի ուսումնասիրության արդյունքում, անդրադառնում նաև կոմիտասյան սկզբունքները ժամանակակից տեխնոլոգիական արտահայտչաձևերի համատեքստում իմաստավորելու Հովհաննեսի նորարարական մոտեցումներին, ավանգարդի ու դասական մտածողության փոխմիակցություններին: Այս բաժնում են ընդգրկված նաև կոմպոզիտորի ժառանգության մեջ իրենց արտացոլումը ստացած Հայոց պատմության ողբերգական էջերը՝ «Սուրբ Վարդան» սիմֆոնիան, Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված «Աքսոր» սիմֆոնիան, «Անիի ավերակները», «Խորհուրդ Նահատակաց» սյուիտը, որում առկա են հայ հոգևոր երաժշտությանը բնորոշ ժանրային միավորները՝ «Սուրբ, Սուրբ», «Հայր մեր», «Տեր Ողորմեա» և այլն: «Այս ստեղծագործությունները, – եզրակացնում է Երնջակյանը, – ... կատարսիսի դեր են կատարել Հովհաննեսի ազգային ոգու և երաժշտական ինքնության որոնումներում, կանխորոշել ստեղծագործական և հոգեբանական ճգնաժամից դուրս գալու ուղիները» (էջ 61):

Երաժշտական արևելագիտության ոլորտում նշանակալի ներդրում ունեցող գիտնականի բեղմնավոր գործունեության արդյունքները համալրող անգլերեն այս գրքի անուրանալի նվաճումներից է երկու մեծ ամերիկահայերի՝ Վիլյամ Սարոյանի և Ալան Հովհաննեսի նորարարական գաղափարներով հագեցած ստեղծագործության յուրովի հանրահռչակումը, և նրանցով պայմանավորված, ընդհանրապես, հայ արվեստի ինքնատիպ ներկայության կարևորումը XX դ. Արևմուտքի մշակույթում: Եվ այս առումով հեղինակի առաքելությունն իրականացված է գիտական բարձր մակարդակով: Հարուստ և նորահայտ բովանդակային շերտերով, հետաքրքիր ձևավորումով կաշառող այս հրապարակումը, անկասկած, իր արձագանքները կունենա և նոր ազդակներ կհաղորդի համաշխարհային մշակույթում անջնջելի հետք թողած հայ արվեստագետների գործի արժևորմանն ու ուսումնասիրությանը:

Լ. Երնջակյանի «Ալան Հովհաննեսի երաժշտական աշխարհը. Արևելք-Արևմուտք խաչմերուկներ» մենագրությունն իր մշակութաբանական ուղղվածությամբ, գիտաճանաչողական արժեքով, ազգային ինքնության խնդիրները միջազգային համատեքստում կարևորող հենակետերի մեկնաբանություններով կարևոր ներդրում է հայագիտության և սփյուռքագիտության ասպարեզում:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Արվ. դ., պրոֆ., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, երաժշտության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունը՝ նոր և նորագույն շրջանի հայ երաժշտության ուսումնասիրություն: Հեղինակ է 12 մենագրության և շուրջ 240 հոդվածի: ORCID:0000-0002-0023-1752; instart@sci.am